

Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
Գիտական խորհրդի 2019թ. ապրիլի 30-ի
N 2-04/19/4 որոշմամբ:



Գիտական խորհրդի նախագահ՝
Հ.Վ.ԹՈՔՄԱԶՅԱՆ

**ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԵԼՅԱԼ
ՕԺԱՆԴԱԿՄԱՆ ԵՎ ՈՒՂՈՐԴՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն փաստաթղթով սահմանվում է Շուշիի տեխնոլոգիական համալսարանում (այսուհետ՝ Համալսարան) վարչական անձնակազմի կողմից ուսանողներին հավելյալ օժանդակություն և ուղղորդում տրամադրելու կանոնակարգը:

1.2. Ուսանողներին օժանդակումը և ուղղորդումը Շուշիի տեխնոլոգիական համալսարանի վարչական անձնակազմի հիմնական գործառույթներից է:

1.3. Վարչական անձնակազմի կողմից ուսանողների օժանդակումը և ուղղորդումը վերաբերում է կրթական գործընթացին և ուսանողական կյանքին, մասնավորապես՝

- 1) աջակցությունը ուսումնական գործընթացներում,
- 2) սոցիալական օժանդակումը,
- 3) նյութական օժանդակումը,
- 4) ապահովումը հանրակացարանով,
- 5) աջակցությունը հասարակական միջոցառումներում:

1.4. Սույն կանոնակարգը հաստատվում և նրանում փոփոխությունները կատարվում են Համալսարանի Գիտական խորհրդի կողմից:

2. ՆՊԱՏԱԿ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Վարչական կազմի կողմից ուսանողներին հավելյալ օժանդակման և ուղղորդման հիմնական նպատակն է ուսումնառողների համար համալսարանական միջավայրին ուսանողների ինտեգրման նպաստումը, կրթական բարենպաստ միջավայրի ստեղծումը և սոցիալական աջակցումը:

2.2. Վարչական կազմի կողմից ուսանողներին հավելյալ օժանդակման և ուղղորդման խնդիրներ են՝

- 1) ուսանողների կրթական և անձնային կարիքների բացահայտում և ուղղորդում,
- 2) ուսանողների սոցիալական խնդիրների բացահայտում և օժանդակում,

- 3) ուսանողների արտալսարանային կյանքի կազմակերպում և օժանդակում:
- 2.3. Հատարվող աշխատանքները հիմնականում ուղղված պետք է լինեն.
- 1) ցածր կուրսերի ուսանողների համալսարանական միջավայրին հարմարվելու աշխատանքների կազմակերպում,
 - 2) ուսանողների կրթական կարիքների վերհանում և լուծման աջակցում,
 - 3) ուսանողների անձնային կարիքների ուսումնասիրում և ուսանողական կյանքի բարելավում,
 - 4) ուսանողների ստեղծագործական և արտալսարանային կյանքի, ուսանողական միջոցառումների կազմակերպում,
 - 5) ուսանողների սոցիալական պաշտպանության կազմակերպում և ապահովում.
 - ա) փոխհատուցման տրամադրման համար անհրաժեշտ տեղեկանքների հավաքագրում,
 - բ) սոցիմբերում ընդգրկելու նպատակով անհրաժեշտ փաստաթղթային փաթեթի ստեղծում,
 - գ) սպաների երեխա ուսանողների ցուցակագրում և ուղղորդում.
 - 6) ուսանողության շրջանում անհրաժեշտ տեղեկատվության ապահովում,
 - 7) առաջադեմ ուսանողների խրախուսման համակարգի զարգացում (պարգևատրումներ, շրջափոխման համակարգ և այլն):

3. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐՉԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

3.1 Ուսանողները լրացուցիչ օժանդակության և ուղղորդման համար կարող են դիմել.

- 1) **Համալսարանի ռեկտորին՝** բոլոր հարցերով, որոնք լուծում չեն ստացել այլ օղակներում, ինչպես նաև այն հարցերով, որոնք անմիջական ռեկտորի իրավասությունների շրջանակում են,
- 2) **Համալսարանի պրոռեկտորներին՝** կրթական և տնտեսական աջակցության, ինչպես նաև նրանց իրավասության շրջանակին առնչվող հարցերով,
- 3) **հաշվապահին՝** ուսման վարձերի, ֆինանսական և հաշվապահական ոլորտի խնդիրներին առնչվող հարցերով,
- 4) **դեկաններին՝** ուսումնական գործընթացի կազմակերպման և դրան առնչվող խնդիրների շուրջ օժանդակման հարցերով,
- 5) **ամբիոնների վարիչներին՝** ամբիոններում դասավանդվող դասընթացների յուրացմանը և ամրապնդմանը, ուսումնական նյութերի տրամադրման և աջակցման այլ հարցերով:

3.2 Վարչական անձնակազմի բոլոր ներկայացուցիչները, այդ թվում համալսարանի ռեկտորը և պրոռեկտորները, սահմանում են հստակ ժամեր շաբաթը

Անձնակազմի անդամները պարզապես ուսանողների ընդունելության համար:
Քննարկվելու է նաև ԿՀ-ի և ԿՀ-ի մասին զեղաբերյալ տեղեկատվությունը փակցվում է
ԿՀ-ի և ԿՀ-ի մասին զեղաբերյալ տեղեկատվության մուտքի մոտ՝ տեսանելի վայրում:


ԿՀ-ի և ԿՀ-ի մասին զեղաբերյալ տարին ամենաքիչը երկու անգամ
տեսանելի տեղեկատվում է ունենում ուսանողների հետ:

ԿՀ-ի և ԿՀ-ի մասին առանձնահանդիպումներ ունենում են նաև պրոռեկտորները և
ԿՀ-ի և ԿՀ-ի մասին զեղաբերյալները:

ԿՀ-ի և ԿՀ-ի մասին իրենց հարցերը կարող են բարձրացնել նաև Համալսարանի
ԿՀ-ի և ԿՀ-ի մասին խորհրդի միջոցով:

ԿՀ-ի և ԿՀ-ի մասին իրենց հարցի լուծումը համապատասխան վարչական աշխատակցի
բրավատություններից դուրս է, ապա նա պարտավոր է հարցի քննարկումը
տեղեկատվել ավելի բարձր կառույց՝ ընդհուպ մինչև Համալսարանի ռեկտորատ և
ԿՀ-ի և ԿՀ-ի մասին խորհուրդ:

Գիտխորհրդի նախագահ՝

 Ա.Աղայան

Գիտական քարտուղար՝



Ա.Աղայան